## Արձանագրության 5

**Նոր Նորք վարչական շրջանի բակային տարածքների աստիճանների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-19/25 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

30.04.2019թ.
Ժամը՝ 10:40

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Ա. Համբարձումյան

### 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ընթացակարգի 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

### 2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ | Բավարար |
| Վահրամ Կնյազյան ԱՁ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

### 3. ԵՔ-ԲՄԾՁԲ-19/25 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/25» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.

-1-ին և 6-րդ չափաբաժինների մասով՝ «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ին,

- 3-5-րդ և 7-8-րդ չափաբաժինների մասով Վահրամ Կնյազյան ԱՁ-ին,

և վերջիններիս ներկայացնել շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:45-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ..... Տ. Իգիթյան

Անդամներ՝ ..... Ա. Կիրակոսյան

..... Կ. Հարությունյան

..... Ա. Հարությունյան

..... Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան